ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի, փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» հուլիսի 2025թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ի, ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ի և ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ.

1.1. ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ն և ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում հայտերի շտկման նպատակով ներկայացրել են փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրել (լրացրել) են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88 ՍՊԸ-ն սահմանված ժամկետում հայտի շտկման նպատակով չի ներկայացրել փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում չի մուտքագրել (լրացրել) 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

1.3. ՍՈՐԵԼԼԻ ՍՊԸ-ի և ԱՆՏԻԳԱ ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում հայտերի շտկման նպատակով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2025թ. հուլիսի 22-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան